ՄԻ ԳԵՐՄԱՆՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

SEBASTIAN HAFFNER

GESCHICHTE EINES DEUTSCHEN

Die Erinnerungen 1914-1933

ՍԵԲԱՍՏԻԱՆ ՀԱՖՆԵՐ

ՄԻ ԳԵՐՄԱՆԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Անհատն ընդդեմ հազարամյա Ռայխի

Թարգմանությունը գերմաներենից՝
Մարիամ Գուրզադյանի

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 94(430):821.112.2-94
ԳՄԴ 63.3(4Գ)
Հ 460

Հաֆներ Սեբաստիան
Հ 460 Մի գերմանացու պատմություն: Անհատն ընդդեմ հազարամյա Ռայխի / Ս. Հաֆներ.- Եր.: Newmag, 2024.- 288 էջ:

Հաֆներն իր հուշագրությունում պատկերում է գերմանացիների կյանքը նացիզմի վերելքի շրջանում և երկու համաշխարհային պատերազմների ընթացքում: 1907-1933 թվականների իրողություններին անդրադառնում է որպես ականատես: Նա կերտում է իր երկրի դարակազմիկ դիմանկարը, որը մշտապես փոխվում էր՝ Հիտլերի երիտասարդական շարժումից մինչև նացիստական իշխանափոխություն: Այս խորապես անձնական պատմությունը ցույց է տալիս, թե արագ դեգրադացվող հասարակարգն ինչպես է իր մամլիչի տակ ճզմում միջին վիճակագրական գերմանացուն: Հեղինակը նկարագրում է օր-օրի կարծրացող ու դաժանացող հանրային վերաբերմունքը, նախապաշարմունքն ու քաղաքականությունը:

ՀՏԴ 94(430):821.112.2-94
ԳՄԴ 63.3(4Գ)

Այս գրքի թարգմանությունն իրականացվել է Գյոթե ինստիտուտի դրամաշնորհով:

The translation of this book was supported by a grant from the Goethe-Institut.

GOETHE INSTITUT

ISBN 978-9939-967-34-9
Geschichte eines Deutschen. Die Erinnerungen 1914–1933 by Sebastian Haffner
© 2000 by Sarah Haffner and Oliver Pretzel
© 2000 by Deutsche Verlags-Anstalt, a division of Penguin Random House Verlagsgruppe GmbH, München, Germany.

Այս գրքի հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Deutsche Verlags-Anstalt ընկերության հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Ներածական 7

Նախերգանք 11

Հեղափոխությունը 95

Հրաժեշտ 171

Վերջաբան 275

Ներածական

2002 թվականի մարտին ես և քույրս՝ Սարա Հաֆները, դաշնային արխիվից տեղեկացանք, որ երիտասարդ պատմաբան Յուրգեն Պետեր Շմիդտը, որը 2000 թվականից ի վեր զբաղվում էր մեր հոր թղթերի համակարգմամբ, երկու ձեռագիր է գտել, որոնք պատկանում են «Մի գերմանացու պատմություն» աշխատությանը:

Առաջին ձեռագիրը գրքի 25-րդ գլխի տպագիր տարբերակն էր, որն անհետ կորած էինք համարում: Կցելով այն ընդհանուր տեքստին՝ քիչ թե շատ հնարավոր դարձավ վերականգնել 24-րդ գլխի նախնական անցումը դեպի 25-րդ գլուխ և վերականգնել ժամանակին Stern ամսագրի կրճատած հատվածները:

Երկրորդը 38-էջանոց ձեռագիր էր, որտեղ պատմությունը շարունակվում է մինչև 1933-ի դեկտեմբեր, և հավելյալ վեց գլուխներում նկարագրվում է Յուտերբոգի ռեֆերենտների ճամբարը: Այդ էջերը համալրում են ամբողջական ձեռագիրը՝ ստանալով ճիշտ այն ծավալը, որ հայրս նշել էր այս գրքի վերջաբանում մեջբերված՝ 1939-ի հոկտեմբերի 6-ի իր նամակում: Թեև ձեռագրերն ընդամենը ուրվագրի տեսքով են, միևնույն է, այստեղ ներկայացված են առանց փոփոխությունների:

Այսպիսով, սույն գիրքը՝ այս երկու լրացուցիչ գլուխներով հանդերձ ու անգլերենից գերմաներեն վերաթարգմանած 10-րդ գլուխը չհաշված, լիովին համապատասխանում է այն ծավալին, որն ունեցել է 1939-ի աշնանը, երբ հայրս որոշել է այն մի կողմ դնել:

Օլիվեր Պրեկցել
Ապրիլ, 2002

Գերմանիան ոչինչ է, բայց յուրաքանչյուր
առանձին գերմանացի շատ բան է:

Գյոթե, 1808

Նախ ամենակարևորը. ի՞նչ եք անում, ինչո՞վ
եք առհասարակ զբաղված այս կարևոր
ժամանակներում: Ասում եմ «կարևոր», որովհետև
կարևոր եմ համարում բոլոր այն ժամանակները, երբ
անհատը հենվում է միայն սեփական ոտքերի վրա
և, ժամանակի ոգուց բզկտված ու կիսամեռ, պետք
է, ուզած թե չուզած, հույսը միայն ու միայն իր վրա
դնի: Մի պահ կանգնել ու շունչ քաշել. երբեմն դա էլ է
բավարար. դուք ինձ հասկացաք:

Պետեր Գան, 1935

Նախերգանք

1

Պատմությունը, որ պատրաստվում եմ այստեղ պատմել, մի յուրահատուկ մենամարտի պատում է:

Դա մենամարտ է երկու բոլորովին անհավասար հակառակորդների՝ չափազանց հզոր, ուժեղ ու անողոք պետության և փոքր, անանուն, անհայտ անհատի միջև: Այս մենամարտն ընթանում է ոչ մարտադաշտում, ինչպես ընդունված է համարել քաղաքականությունը. անհատը բնավ քաղաքական գործիչ չէ, առավել ևս՝ դավադիր կամ «պետության թշնամի»: Նա ամբողջ ընթացքում միայն պաշտպանվում է, ուզում է պահպանել այն, ինչ համարում է սեփական անհատականությունը, կյանքն ու արժանապատվությունը: Այդ ամենի վրա անվերջ հարձակվում է այն պետությունը, որտեղ նա ապրում է և որի հետ ստիպված է գործ ունենալ, ընդ որում, հարձակումներն իրականացվում են ծայրահեղ դաժան, թեև բավական անհեթեթ միջոցներով:

Սարսափելի սպառնալիքների տակ այդ պետությունը տվյալ անհատից պահանջում է հրաժարվել իր ընկերներից, լքել սիրելիին, մի կողմ դնել սեփական համոզմունքները՝ ընդունելով նոր՝ պարտադրված համոզմունքներ, բարևել այլ՝ իրեն ոչ բնորոշ ձևով, ուտել և խմել ոչ այն, ինչը դուր է գալիս, ազատ ժամանակը վատնել այնպիսի զբաղմունքների վրա, որոնցից խորշում է, թույլ տալ, որ իրեն, իր անհատականությունն օգտագործեն այնպիսի արկածախնդրություններում, որոնք ինքը մերժում է, ուրանալ սեփական անցյալն ու ես-ը և, այդուհանդերձ, ցուցաբերել անզուսպ, չդադարող խանդավառություն ու լինել անսահման երախտապարտ:

Տվյալ անհատն այդ ամենը չի ուզում: Նա ամենևին պատրաստ չէ այդ հարձակմանը, որի զոհն է դարձել, բնածին հերոս չէ, առավել ևս՝ բնածին նահատակ: Նա պարզապես միջին վիճակագրական մահկանացու է՝ բազմաթիվ թուլություններով հանդերձ, ու վտանգավոր ժամանակաշրջանի արգասիք. բայց այն ամենը, ինչ պարտադրում է պետությունը, նա չի ուզում: Այդ պատճառով էլ վճռում է մենամարտել առանց

խանդավառության, ավելի շուտ, ուսերը թոթվելով, միաժամանակ լուռ վճռականությամբ չհանձնվել: Բնականաբար, իր հակառակորդից անհամեմատ թույլ է, փոխարենը ճկուն է: Կտեսնենք, թե նա ինչպես է շեղող հնարքներ գործի դնում, խույս տալիս, անսպասելի նորից հարձակվում, պահպանում հավասարակշռությունն ու, ծանր հարվածները հետ մղելով, մազապուրծ լինում: Կնկատենք, որ նա, որպես առանց վառ արտահայտված հերոսական կամ մարտիրոսական հատկանիշների միջին վիճակագրական մարդ, ընդհանուր առմամբ, լավ էլ դիմադրում է: Վերջում ականատես կլինենք, թե ինչպես է ստիպված կիսատ թողնում պայքարը կամ, եթե կուզեք, տեղափոխում այն ուրիշ հարթություն:

Այդ պետությունը Երրորդ ռայխն է, իսկ անհատը՝ ես: Մեր գոտեմարտին հետևելը պետք է որ հետաքրքիր լինի. ուզածդ մրցամարտ հետաքրքրական է (հույս ունեմ, որ կհետաքրքրի): Բայց այս ամենը չեմ պատմում միայն զվարճանքի համար: Ուրիշ մտադրություն ունեմ, որն ավելի թանկ է սրտիս:

Իմ անձնական մենամարտը Երրորդ ռայխի հետ եզակի երևույթ չէ: Հազարավոր ու հարյուրհազարավոր այսպիսի մենամարտեր, որոնց ընթացքում անհատը փորձում է պաշտպանել սեփական ես-ն ու արժանապատվությունը՝ ընդվզելով գերիշխան, թշնամական պետության դեմ, Գերմանիայում բռնկվում են արդեն վեց տարի, բացարձակ մեկուսացման մեջ ու հանրության աչքից հեռու: Մենամարտիկներից ոմանք՝ ավելի հերոսական ու անձնազոհ, չնահանջեցին՝ հայտնվելով համակենտրոնացման ճամբարներում կամ խոշտանգման նկուղներում. նրանց հուշարձաններն ապագայում, անկասկած, կկանգնեցնեն: Մյուսներն ավելի շուտ հանձնվեցին, քան ես կհեռանայի, ու արդեն վաղուց գրոհային ջոկատների դժգոհ, քրթմնջացող պահեստազորայիններ են կամ նացիստական կուսակցության թաղամասային լիազորներ: Իմ պարագան հենց այս երկու ծայրահեղ դեպքերի միջին տարբերակն է: Ըստ այդմ՝ լավ երևում է, թե ինչ հնարավորություններ ունի մարդ արարածն այսօրվա Գերմանիայում:

Պատկերը, պիտի խոստովանենք, բավական անհույս է: Եթե արտաքին աշխարհն ուզենար, մարդիկ այդքան հուսահատ չէին լինի: Կարծում եմ, արտաքին աշխարհը պետք է շահագրգիռ լինի, որ այդ մարդկանց դրությունն այդքան հուսահատական չլինի: Դրա շնորհիվ կարելի էր եթե ոչ խուսափել պատերազմից, դրա համար արդեն շատ ուշ է, ապա գոնե կասեցնել այն մի քանի տարով: Բարի կամքի տեր գերմանացիները, որոնք

փորձում են պաշտպանել անձնական ազատությունն ու խաղաղությունը, չեն էլ ենթադրում, որ պաշտպանում են ինչ-որ ավելի մեծ բան՝ ամբողջ աշխարհի խաղաղությունն ու ազատությունը:

Այդ պատճառով, կարծում եմ, արժի ջանքեր գործադրել, որպեսզի աշխարհն ուշադրություն դարձնի Գերմանիայում տեղի ունեցող անտեսանելի գործընթացներին:

Այս գրքում պարզապես ուզում եմ իմ պատմությունը պատմել, ոչ թե բարոյախոսել: Այնուամենայնիվ, գիրքն ունի բարոյական եզրակացություն, որն Էլգարի «Էնիգմայի վարիացիաների»[1] մեկ այլ, ավելի կարևոր թեմայի նման լուռ անցնում է ընդհանուր ստեղծագործության միջով: Դեմ չեմ, եթե ընթերցելուց որոշ ժամանակ հետո իմ արկածները մոռացվեն: Բայց բավարարված կլինեմ՝ մարդիկ չմոռանան այն բարոյական եզրակացությունը, որի մասին լռում եմ:

2

Նախքան տոտալիտար պետությունը սպառնալով ու պահանջելով կհասներ ինձ և ցույց կտար, թե ինչ է նշանակում սեփական մաշկի վրա զգալ պատմությունը, ես արդեն հասցրել էի ահագին բան հասկանալ այն ամենից, ինչն անվանում են «պատմական իրադարձություն»: Դա վերաբերում է իմ սերնդի բոլոր եվրոպացիներին, բայց գերմանացիներին, անկասկած, ավելի շատ:

Բոլոր այդ պատմական իրադարձությունները, բնականաբար, հետք են թողել թե՛ իմ, թե՛ իմ գրեթե բոլոր հայրենակիցների վրա. եթե դա չհասկանանք, հնարավոր չի լինի հասկանալ, թե ինչպես կարող էր տեղի ունենալ այն ամենը, ինչը հաջորդեց այդ իրադարձություններին:

Բայց շատ կարևոր տարբերություն կա այն ամենի միջև, ինչ տեղի էր ունեցել նախքան 1933 թվականը, և ինչ որ եղավ դրանից հետո: Նախորդ բոլոր իրադարձություններն անցել էին մեր կողքով, մեր վրայով, դրանք մտահոգում ու հուզում էին մեզ, ոմանց դա կյանք արժեցավ, ոմանք սնանկացան, բայց այն ժամանակ ոչ մեկին չէին կանգնեցրել խղճի ծայրահեղ ընտրության

[1] Edward William Elgar, Էդվարդ Վիլյամ Էլգար (1857–1934) – բրիտանացի կոմպոզիտոր: Ամենահայտնի գործերից է «Էնիգմա. վարիացիաներ» սիմֆոնիկ ստեղծագործությունը, որի մասին հեղինակն ասում է, որ Էնիգմայի գլխավոր թեմայի բոլոր 14 վարիացիաների միջով «անցնում է, բայց չի հնչում, ևս մեկ՝ ավելի կարևոր թեմա»: (Բոլոր ծանոթագրությունները՝ թարգմանչի: Հեղինակի ծանոթագրությունները հիշատակվում են առանձին):

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark